



**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**Լոս Անջելեսի Նվազագույն Ժամավճար**

Ազդեցության մեջ է 2018 թվի Հունիսի 1-ից



**\$12.00** ժամում

**\$13.25** ժամում

Գործատուները՝ ովքեր ունեն մինչև 25 աշխատակիցներ

Գործատուները՝ ովքեր ունեն 26 կամ ավելի աշխատակիցներ

Համաձայն Լոս Անջելեսի Նվազագույն Ժամավճարի Հրամանագրի՝ 2016 թ.-ի Հունիսի 1-ից, բոլոր գործատուները իրենց աշխատակիցներին պետք է վճարեն ըստ նոր սահմանված Նվազագույն Ժամավճարի: Նվազագույն Ժամավճարի չափը յուրաքանչյուր տարի կձգորտվի ըստ Լոս Անջելեսի Նվազագույն Ժամավճարի Հրամանագրի 187.02 Բաժնի (Section 187.02): Հնարավոր է լինեն որոշ բացառություններ և հետաձգումներ:

Ազդեցության մեջ է :	Գործատուները՝ ովքեր ունեն 26 կամ ավելի աշխատակիցներ :	Գործատուներ՝ ովքեր ունեն մինչև 25 աշխատակիցներ, կամ ոչ շահութաբեր կազմակերպություններ, որոնք ունեն 26 կամ ավելի հաստատված աշխատակիցներ, կվճարեն հետաձգված սովորապարտությունը :
7/1/2017	\$12.00	\$10.50
<b>7/1/2018</b>	<b>\$13.25</b>	<b>\$12.00</b>
7/1/2019	\$14.25	\$13.25
7/1/2020	\$15.00	\$14.25
7/1/2021	\$15.00	\$15.00

Լոս Անջելեսի Աշխատավարձի Հարկադրման Բաժնի հրամանագիրը լիազորում է Պայմանագրային Կառավարման Բյուրոյի (Bureau of Contract Administration), Աշխատավարձի Ստանդարտների Գրասենյակին (Office of Wage Standards) հետաքննել հնարավոր խախտումները, ստուգել աշխատատեղերը, գրուցել աշխատակիցների հետ, և վերանայել հաշվարկման գրառումները: Աշխատավարձի Ստանդարտների Գրասենյակը (The Office of Wage Standards) կկիրառի քաղաքի նվազագույն ժամավճարի վերաբերյալ հրամանագիրը՝ ներառելով սակայն չսահմանափակելով խախտումների համար ինչպիսիք են 1)չվճարելու Լոս Անջելեսի Նվազագույն ժամավճարը, 2)ծանուցումների ձախողումը, գրառումը, ժամավարձային գրառումների պահանջները, և 3)վրեժխնդրությունը: Լոս Անջելեսի Աշխատավարձի Հարկադրման Բաժնի հրամանագրի 188.04 հոդվածը (Section 188.04) աշխատակիցների իրավունքները պաշտպանում է խտրականությունից կամ վրեժխնդրությունից, ապահովելով քաղաքի նվազագույն ժամավարձ ստանալը:

**Լոս Անջելեսի հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդ**

Ազդեցության մեջ է 2017 թվի Հունիսի 1-ից

Բոլոր գործատուներից կպահանջվի հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդ տրամադրել՝ համաձայն Լոս Անջելեսի Նվազագույն Ժամավճարի Հրամանագրի: Հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդը կտրամադրվի բոլոր այն աշխատակիցներին, ովքեր որոշակի շաբաթվա ընթացքում առնվազն երկու ժամ են աշխատում Լոս Անջելես քաղաքում նույն գործատուի մոտ տարեկան 30 կամ ավելի օրվա ընթացքում:

Իրավունք	
Սկզբնային (Front-Loading)	Առնվազն 48 ժամ կտրամադրվի՝ աշխատած յուրաքանչյուր տարվա, օրացուցային տարվա կամ 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում; ԿԱՍՄ
Հաշվեգրման	Հիվանդության հետ կապված մեկ ժամ վճարովի արձակուրդ՝ յուրաքանչյուր աշխատած 30 ժամվա դիմաց:
72 ժամվա սահմանափակում	Հաշվեգրված չօգտագործված հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդը կփոխանցվի հաջորդ աշխատանքային տարի և պետք է սահմանափակվի առնվազն 72 ժամով: Սակայն, գործատուն կարող է ընտրել սահմանափակում չդնել կամ ավելացնել այն:
Աշխատանքից դուրս գալը	Գործատուից չի պահանջվում փոխհատուցում տրամադրել աշխատակցի հաշվարկված կամ չօգտագործված հիվանդ օրերի համար աշխատանքից դուրս գալու պահին:
Վերականգնում	Եթե աշխատակցին կրկին վարձել են աշխատանքից դուրս գալուց մեկ տարվա ընթացքում, ապա նախկինում հաշվեգրված և չօգտագործված հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդը պետք է վերականգնվի:

Օգտագործումը	
Երբ	Աշխատակիցը կարող է հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդը օգտագործել աշխատանքի անցնելուց 90-րդ օրվանից:
Ինչպես	Գործատուն պարտավոր է հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդ տրամադրել աշխատակցի բանավոր կամ գրավոր պահանջի հիման վրա իր կամ ընտանիքի անդամի, կամ որևէ այլ անհատի համար արյան կամ մերձավորությամբ կապված աշխատակցի հետ: Արձակուրդի որակավորված օգտագործումը կարելի է գտնել LAMC Բաժնի 187.04(G)-ում: Հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդի օգտագործումը կարելի է սահմանափակել տարեկան 48 ժամով:

արձակուրդ ստանալու իրենց իրավունքները իրականացնելու համար:Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի բաժին 187.06-ը պաշտպանում է աշխատակիցներին որևէ խտրականությունից կամ հաշվեհարդարից՝ Քաղաքի վճարովի

**Լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք զանգահարել Office of Wage Standards**

**1-844-WAGESLA (924-3752) հեռախոսահամարով կամ էլեկտրոնային նամակ ուղարկել [wagesla@lacity.org](mailto:wagesla@lacity.org) կամ այցելել <http://wagesla.lacity.org/> կայքէջը:**

Որպես Հաշվառման Երկրորդ աստիճանի ակտիվ պաշտպանված անձ՝ Լոս Անջելես քաղաքը չի խտրականացնում Ձեր դեմ հաշվառման հիման վրա և, ըստ պահանջի, կտրամադրի ողջամիտ հարմարություններ՝ ապահովելու համար հավասար մատչելիությունն իր ծրագրերին, ծառայություններին և գործունեություններին: